

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՂԹԱԾ ԿԱՆԱՆՑ ՉԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ

Ըստ ընտրական վերջնական արդիւնքներուն հիման վրայ Ներքին գործերու եւ քաղաքապետութեանց հարցերու մախարարութեան հրապարակած յայտարարութեան, քաղաքապետական խորհուրդներուն մէջ կանանց ներկայութիւնը եղած է 10,37 առ հարիւրի համեմատութեամբ, իսկ թաղապետական խորհուրդներուն մէջ՝ 16,40 առ հարիւրի: Ինչ կը վերաբերի թաղապետներուն, ապա այդ պաշտօնին ընտրուողներէն միայն 2,42 առ հարիւրը կիներ են:

ՍԱԼԱՄ. «ԲՆԱԿԱՆՈՂԱՑՈՒՄԻՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ Է»

Վարչապետ Նաուաֆ Սալամ յայտնեց, որ Լիբանան տարածաշրջանին մէջ կը զօրակցի պաղեստինեան-իսրայէլեան երկու պետութիւններու համագոյակցութեան միտող լուծումի առաջարկին, պայմանաւ որ խաղաղութեան դիմաց Իսրայէլ հեռանայ բռնագրաւեալ հողերէն: Պատասխանելով Պէյրութէ Աւի բնականոնացումի հնարաւորութեան մասին հարցումի մը, Սալամ շեշտեց, որ «յարաբերութիւններու բնականոնացումը անբաժան մասնիկն է ամբողջական եւ մնայուն խաղաղութեան, որուն կը ձգտինք հասնելու մոյմիսկ վաղը եւ ոչ թէ յաջորդ օրը, պայմանաւ որ գործադրուի երկու պետութիւններու լուծումը եւ հաստատուի պաղեստինեան պետութիւն մը»: Սալամ նշեց, որ բանակը Լիբանի գետէն հիւսիս տիրապետած է Յըզպալլայի շուրջ հինգ հարիւր դիրքի, իսկ այժմ աշխատանքը կը շարունակէ հարաւային գօտիին մէջ:



Ամերիկեան CNN-ի ծանօթ հաղորդավար Պէքի Անտըրսընին հետ զրոյցի ընթացքին վարչապետը Ուաշինկթընին կոչ ուղղեց յաւելեալ ճնշում բանեցնելու Իսրայէլի վրայ, որպէսզի գործադրէ զինադադարի համաձայնութեան բոլոր կէտերը եւ քաջուի Լիբանանի բռնագրաւեալ հողերէն: Սալամ տեղեկացուց, թէ մշակուած է պաղեստինեան զէնքը յանձնելու ծրագիր մը՝ սկսելով Պէյրութի մերձակայ գաղթակայաններէն: Անդրադառնալով Լիբանանի ներքին հարցերուն, ան յայտնեց, որ կառավարութիւնը ունի երկու գլխաւոր սկզբունք՝ Լիբանանի ամբողջ տարածքին պետութեան հեղինակութեան ամրապնդումը եւ վարչական ու ելեւմտական վիճակի բարեկարգումը: Վարչապետը բացատրեց, որ Լիբանան քաղաքացիական պատերազմէն ետք կորսնցուցած է շատ առիթներ, իսկ այսօր եւս կայ վերականգնումի առիթ եւ կառավարութիւնը յանձնառու է գործադրելու արմատական բարեփոխումներ, որոնց միջոցաւ անկախ աշխատելու հնարաւորութիւն պիտի տրուի արդարադատական կառոյցին՝ վերջ տալու համար փտածութեան երեւոյթին, որմէ շատ յոգնած են լիբանանցիները: «Յանձնառու մնալով Արժոյթի միջազգային հիմնադրամին մշակած ծրագրի գործադրութեան, աւանդատէրերը հնարաւորութիւն պիտի ունենան ստանալու իրենց իրաւունքները, որպէսզի կարելի ըլլայ վերականգնել մարդոց վստահութիւնը մեր դրամատնային ոլորտին ու ելեւմտական համակարգին նկատմամբ», յայտնեց վարչապետը, արաբներէն խնդրելով աջակցիլ Լիբանանին: Անոր համոզումով, Ուաշինկթըն-Թեհրան բանակցութիւնները կրնան միայն դրական ազդեցութիւն ունենալ ամբողջ տարածաշրջանին վրայ: Խօսելով Լիբանան ապաստանած սուրիացի տեղահանուածներու թղթածրարին մասին, Սալամ նշեց, որ կառավարութիւնը յանձնառու կը մնայ սուրիացիներու ապահով եւ արժանապատիւ տունդարձին, աւելցնելով որ այդ հարցը լուծելու համար աշխատանքային ծրագիր մը կը քննարկուի Դամասկոսի իշխանութիւններուն եւ ՄԱԿ-ի գաղթականներու հարցերով զբաղող գործակալութեան հետ:

ՏԵՂԱՅԱՆՈՒԹՆԵՐՈՒՆ ԶԱՐՑԸ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ Է

Հանրապետութեան մախագահ ժողէֆ Աուն յայտնեց, որ Լիբանան ապաստանած սուրիացի տեղահանուածներուն




թղթածրարին լուծումը կը համարուի առաջնահերթութիւն, աւելցնելով որ այս հարցը կ'արժարժուի Դամասկոսի իշխանութիւններուն հետ, մանաւանդ Սուրիոյ նկատմամբ սահմանուած

ամերիկեան պատժամիջոցներու չեղարկումի լոյսին տակ: Սուրիոյ հարցով ՄԱԿ-ի յատուկ պատուիրակ Կիւ Փետըրսընին եւ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի յատուկ համակարգողին հետ Պաապտայի մէջ ունեցած տեսակցութեան ընթացքին Աուն անդրադարձաւ նաեւ հարաւի վիճակին եւ ահազանգեց, որ սահմանային բռնագրաւեալ հինգ բլուրներէն չնահանջելով եւ իր բռնարարքները շարունակելով, Իսրայէլ կը դժուարացնէ լիբանանեան բանակին տեղակայումը մինչեւ սահման: Անոր համաձայն, Պէյրութ կը շարունակէ հաղորդակցութիւնները արաբական եւ միջազգային կողմերուն հետ՝ հասնելու համար զինադադարի համաձայնութեան ամբողջական գործադրութեան:

ԱՆԱՃԱՌ ԴԱՏԱԽՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Հանրապետութեան մախագահ ժողէֆ Աուն Գերագոյն խորհուրդի մօր դատաւորներու երդմնակալութեան արարողութեան ընթացքին յայտնեց, որ փտածութիւնը արմատախիլ ընելու համար Լիբանանի կարիք ունի անաչառ դատաւոր-



ներու, որոնք կ'աշխատին հիմնուելով օրէնքին վրայ եւ չեն ենթարկուիր որեւէ ճնշումի կամ սպառնալիքի: Աուն երէկ Պաապտայի մէջ ընդունեց նաեւ խորհրդարանի մախագահ Նեպիի Պըրրին ու քննարկեց երկրին ընդհանուր զարգացումները, Պըրրի բացառիկ որակեց Աունի հետ խորհրդակցութիւնը եւ հաւաստիացուց, թէ ինք կը զօրակցի ԵՈՒՆԻՖԵԼ-ի խաղաղապահներու առաքելութեան:

ՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ ՀԱՍՆ ՀԻՒՄԻԱՅԻՆ ՊԵՔԱՍ

Ձինադադարէն ետք իսրայէլեան ծանրագոյն հարուածներուն շարքին միացան երէկ արեւածագին Պեքայի հիւսիսային Թարայիա եւ Շմըսթար շրջանները թիրախաւորած վեց հարուածները: Իսրայէլեան բանակը միւս կողմէ յայտարարեց, թէ օդուծին գործողութիւնները կեդրոնացած են Յըզպալլային պատկանող զինուորական դիրքերու եւ ենթակառոյցներու վրայ: Լիբանանեան բանակը իր կարգին յայտարարեց, թէ հարաւային շրջաններու մէջ վերաբացած է իսրայէլեան բանակին հողակոյտերով փակուած շարք մը ճամբաներ եւ բացառապէս լոյտն սարք մը օժտուած ապահովական տեսախցիկներով: Բանակի հրամանատարութիւնը նշեց նաեւ, թէ Սուրիոյ հետ սահմանային գօտիին վրայ շարունակուող աշխատանքներուն ծիրին մէջ, բանակը սահմանային Եահֆուտա գիւղի բարձունքներուն վրայ վերջերս փակած է ապօրինի վեց անցակէտ: Իսկ ամերիկեան լրատուամիջոցները հաղորդեցին, թէ ամերիկացի յատուկ պատուիրակ Մորկըն Օրթէյկըս յառաջիկայ շաբաթավերջին պիտի ժամանէ Պէյրութ՝ քննարկելու համար ապօրինի զէնքին թղթածրարը եւ Իսրայէլի հետ բնականոնացումի հոսանքին միանալու հնարաւորութիւնը:



Նոյն ծիրին մէջ, Յըզպալլա յայտարարեց, թէ կուսակցութեան համակարգումի եւ հաղորդակցութեանց հարցերով պաշտօնատար Ուաֆիք Սաֆա տեսակցած է Լիբանանի մէջ ՄԱԿ-ի յատուկ համակարգող ժանին Փլասխարթի հետ՝ քննարկելու համար 1701 բանաձեւի գործադրութիւնը եւ իսրայէլեան շարունակական ոտնձգութիւնները: Սաֆա ահազանգած է իսրայէլեան բռնարարքներէն եւ զգուշացուցած, թէ վիճակը յղի է մագլցումի վտանգով, շեշտելով զինադադարի համաձայնութեան յանձնառու մնալու անհրաժեշտութիւնը՝ վերականգնելու համար կայունութիւնը:

ՄԴ՜ՀԿ ԿԸ ՏՕՆԱԽՄԲԷ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՂԹ-ԱՆԱԿԸ

Լիբանանի քաղաքապետական եւ թաղապետական ընտրութիւններուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան առաջադրած եւ զօրակցած թեկնածուներուն յաղթանակը տօնախմբելու, յաղթած թեկնածուները շնորհաւորելու եւ ընտրական հոլովոյթին մասնակցած բազմաթիւ կամաւորներուն շնորհակալութիւն յայտնելու նպատակով, երէկ երեկոյեան Նոր Հաճմոյ մայր պողոտային վրայ կազմակերպուեցաւ



տօնախմբութիւն, ներկայութեամբ ընտրուած թեկնածուներ Յովհաննէ Պչաքճեանի, Արմէն Ալէքեանի եւ Գարուի խաչիկեանի, Ռըմէյի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Դեւոնդ քինյ. Լոշխաճեանի, ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տազէսեանի, անդամներուն, ազգային երեսփոխան Կիրակոս Տօնիկեանի, ՀՄՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Միսաք Նաճարեանի եւ վարչութեան անդամներուն, ՄԴՀԿ մասնաճիւղերու ատենապետներուն, ինչպէս նաեւ կուսակցութեան հովանաւորութեամբ գործող միութիւններու եւ կառոյցներու ատենապետներուն եւ ներկայացուցիչներուն:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՄԴՀԿ Վարիչ մարմինի անդամ ընկ. Գեորգ Տաղլեան, որ ողջունեց ներկաները եւ զանոնք ու թեկնածուները շնորհաւորեց ընտրական յաղթանակին համար:

Գեղարուեստական առաջին հատուածով ելոյթ ունեցաւ խոստումնալից երգիչ Նարեկ Նազազեան՝ ներկայացնելով շարք մը ազգային երգեր:

Ապա, ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինին խօսքը փոխանցեց ընկ. Տիգրան Միհրանեան: Ան վստահութիւն յայտնեց, որ կուսակցութեան ներկայացուցիչները իրենց ծառայութեամբ պիտի գոհացնեն իրենց թաղամասերուն



բնակչութեան կարիքները, շեշտելով որ լիբանանահայութիւնը արժանի է ապրելու արժանապատիւ եւ խաղաղ պայմաններու մէջ: «ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինը ի սրտէ շնորհակալութիւն կը յայտնէ իր հաւատարմ շարքին եւ համակիրներուն, որոնք խիտ շարքերով ներկայացան քուէակեդրոններ եւ իրենց քաղաքացիական պարտականութիւնը ամրապնդեցին եւ իրենց վստահութիւնը ցուցաբերեցին կուսակցութեան առաջադրած թեկնածուներուն», ըսաւ ան: Ընկ. Միհրանեան ողջունեց ՀՅԴ-ն եւ ՈԱԿ-ը՝ ընտրութիւններուն հայկական գործնական միասնականութիւնը ամրապնդելուն համար՝ յանուն լիբանանահայութեան վերելքին: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ միասնական ցանկին մաս կազմող բոլոր քաղաքական ուժերուն, ինչպէս նաեւ ընտրական հոլովոյթին մասնակցած ՄԴՀԿ ընտրական գրասենեակի բոլոր կամաւորներուն, որոնք ճիշդ չխմայեցին հասնելու այս արդիւնքին: Խօսելով 2026-ի խորհրդարանական ընտրութիւններուն մասին, ընկ. Միհրանեան ըսաւ. «Նոյն նուիրումով, նոյն ոգիով պիտի շարունակենք մեր երթը՝ հասնելու մեր նպատակին, որ լիբանանահայութիւնը խորհրդարանին մէջ ներկայացուի արժանի եւ արդար երեսփոխաններով: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ են արժանապատիւ հայու քուէն եւ վստահութիւնը»:

Գեղարուեստական յայտագրի երկրորդ հատուածով ելոյթ ունեցան ընկ. Յովիկ Թաֆրանեանը եւ Հրաչ Տաւուտեանը:

Տօնախմբութիւնը եզրափակուեցաւ «Ուխտի հրաւեր»-ի միացեալ կատարումով:

ԱԶՆԻՒ ՈՒ ԳՐԱՍԷ՛Ր ԸԱՅՈՐԴԻ,
ԿԱՐԴԱ՛, ՏԱՐԱԾԷ՛ ԸԱՅ ԹԵՐԹԸ,
ՆԵՅՈՒԿ ԿԱՆԳՆԻՐ ԱՆՈՐ ՆԻՒԹԱՊԷՍ ԵՒ ԲԱՐՈՅԱՊԷՍ

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՐՕՆԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ 65-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՆԱՅԻՏ ՏԱՆՁԻԿԵԱՆ

Կիրակի, 25 Մայիս 2025-ին, Սուրբ Էջմիածնի Կրօնաւեր Տիկնանց Զամախմբումի 65-ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Զ.Բ.Ը.Մ.-ի Տեմիրճեան կեդրոնին մէջ Տըպայէ, Լիբանան: Զերծ ընդունելութենէ ետք յայտագիրը սկսաւ ժամը 13:30-ին:



Ներկայ էին Տէր Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Զայոց կաթողիկոսի ներկայացուցիչ, Տէր Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանը՝ Դամասկոսի թեմի Առաջնորդ, Տէր Տաճատ եպիսկոպոս Աշգեանը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ ներկայացուցիչ, Զայր Մետրոպ ծ.վ. Թովալ-եանը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Զայոց Տ.Տ. Ռաֆայէլ Պետրոս Ի.Ա. Միմասեան կաթողիկոս պատրիարքի ներկայացուցիչ, Մետրոպ վրդ. Միլաիհեանը՝ Մխիթարեան Միաբանութեան Միջին Արեւելքի Մեծաւոր, ազնուափայլ տիկին Նարինէ Աթաբեկեանը՝ Լիբանանի մէջ Զայաստանի Զանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպանի տիկին, մեծալարգ տիար Սեդրակ Սարգսեանը՝ հիւպատոս Զայաստանի Զանրապետութեան, մեծալարգ տիար Պերճ Աբգարեանը՝ Ֆրեզնոյի մէջ Զայաստանի Զանրապետութեան պատուոյ հիւպատոս, մեծալարգ տղթք. Վարուժան Ալըքարմաքեանը՝ «Քլարա Մարկոսեան» հիմնադրամի տնօրէն:



Զամախմբումի աւետնադպրուի Յասմիկ Տեմիրճեանի բարի գալուստի խօսքէն ետք, «Էջմիածին» եւ «Զայոսպետական Մաղթանք» շարականները ներկայացուց թեմոր ճօնի Կեօքեան:

Յոտնկայս հետեւեցանք գերաշնորհ Տէր Արմաշ եպս. Նալպանտեանի ընթերցումին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Զայոց կաթողիկոսի Գիր Օրհնութեան ուղղուած Զամախմբումին: Ապա, գերաշնորհ Տէր Տաճատ եպս. Աշգեան ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի Գիր Օրհնութիւնը՝ ուղղուած Զամախմբումին:



Աւետնապետուի Անահիտ Տանձիկեան, իր կարգին, ներկայացուց իր «Սրտի խօսք»-ը: Ապա, ներկաները տեսերիզով հետաքրքրութեամբ հետեւեցան Սուրբ Էջմիածնի Կրօնաւեր Տիկնանց Զամախմբումի 2023-2025-ի գործունէութեան:

«Le Blanc Catering» մատուցեց համադամ ճաշեր, որմէ ետք գերշ. Տէր Արմաշ եպիսկոպոս Նալպանտեան եւ տիկին Անահիտ Տանձիկեան ուղանուէրներով պատուեցին տիար Պերճ Աբգարեանը եւ տղթք. Վարուժան Ալըքարմաքեանը:

Արամ Ա. կաթողիկոսի ներկայացուցիչը, Տէր Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանը եւ վարչութեան անդամներ պարգեւներ նուիրեցին Զամախմբումի 65-ամեակի 70 անդամներէն 34-ին, որոնք ներկայ էին տօնակատարութեան: Պարգեւները մատուցուած են Գարեգին Բ. Ամենայն Զայոց կաթողիկոսին կողմէ:

Փակման խօսքը կատարեց Բարձր. Տէր Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանը: Ան անդրադարձաւ թէ համախմբումը հիմնադրութենէ ի վեր ջանացած է հայ ժողովուրդին ու Զայ եկեղեցիին բարօրութեան, եւ յատկապէս թիկունք եւ զօրավիզ կանգնած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Սրբազանը որոշ պատմականը կատարեց երկու կաթողիկոսութիւններու պատմութեան եւ փառք տուաւ Աստուծոյ որ բնական ընթացքի մէջ են մեր եկեղեցիներու յարաբերութիւնները: Ան ջերմապէս շնորհաւորեց եւ օրհնեց ինչ ու նոր անդամուիները, իրենց անձնուրաց գոհողութիւններն ու նուիրումը, եւ մաղթեց, որ Զամախմբումը շարունակէ իր այս հայրենամուտը ու քրիստոնէական շարքերը յանուն Մայր Աթոռի պայծառութեան եւ զոյգ հայրենիքներու խաղաղ եւ անասան գոյատեւումին:

Յուշերու Պատումով ՄՏԱԻՈՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱԳԻՐ, ԼՐԱԳՐՈՂ ՌԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԱԼԻԾ ՃԵՊԵՃԵԱՆ՝ ԱՂՊԱՊԵԱՆԻ ՅԱԻԱԼԻ ԵԻԶՈՒՄԸ

ՊԱՐՈՅՐ Զ. ԱՂՊԱՇԵԱՆ

24 Օգոստոս 1964:

Պէյրուի մաւահանգիստ, ուր խռնուած էր լիբանանահայ բազմութիւն մը, որ եկած էր ճամբու դնելու ու հրաժեշտ տալու իր զաւակներուն ու հարազատներուն, որոնք Զայրենիք պիտի մեկնէին, իրենց համալսարանական բարձրագոյն կրթութիւնը ստանալու:

Զամապատկերը թէ՛ յուզիչ էր, թէ՛ ոգեւորիչ, ուր կը տիրէր հայրենասիրական ու հայաստանապաշտական իւրայատուկ մթնոլորտ, մանաւանդ որ մեկնող թեկնածուները հայրենիքի մէջ պիտի շարունակէին իրենց ուսումը ու ստանային համապատասխան մասնագիտական վկայականներ, իսկ աւելի հպարտացնողը՝ անոնք առաջին անգամ ըլլալով ոտք պիտի դնէին հայրենի հողին վրայ, տեսնէին ու վայելէին, ապրէին ու ծանօթանային հայրենիքի ջերմութեան ու գրաւութեան, որուն համար ալ անհամբեր էին եւ ակնդէտ պատումի մէջ:

«Արմենիա» զբօսանաւը կը սպասէր նորահաս սերունդի ներկայացուցիչներուն, որպէսզի զանոնք փոխադրէ իրենց կեցութեան երկիր՝ Զայաստանը, Միջերկրական ու Սեւ ծովերը հատելով, համոզիպելով Սուրիոյ, Կիպրոսի, Թուրքիոյ, Յունաստանի, Եգիպտոսի, Պոլկարիոյ ու Ռումանիոյ նաւահանգիստները, հանգրուանելու համար Օտեսա, ուրկէ շոգեկառքով անոնք պիտի մեկնէին իրենց իջեւանելիք հայրենական օժակները (հանրակացարանները):

Առ այդ, մինչ զբօսանաւին նուազախումբը իր շինիչ ու խանդավառող երաժշտութեամբ կը բարձրացնէր բոլորին տրամադրութիւնները ու հրաժեշտի պահուն զգացականութիւնը, ի տես ողջագոյրումներուն, ողջերթներուն ու մաղթանքներուն, հետաքրքրական էր ամբողջ տեսարանին ակնդիր դառնալ, որ անմախքնթաց էր ու խորապէս տպաւորիչ:

Ամիջապէս ըսեմ, որ ուսանողներուն մեծ մասը (աւելի քան յիսուն հոգի, իրար «անծանօթ» էին, եթէ չհաշուենք կարգ մը հատուկեան պարագաներ):

Անշուշտ, ինչպէս բոլոր ծնողները, նաեւ իմ ծնողքս՝ Յովհաննէս եւ Մարի Աղապշեանները, իոն կը գտնուէին, երբ ուշադրութիւնս գրաւեց, որ հայրս մտերմիկ խօսակցութիւն մը կ'ունենար մէկու մը հետ, որուն յաջորդեց զիս իր մօտ կանգնելու ու ծանօթացնելը:

- Ասիկա իմ լաւ բարեկամս է, հայրենասէր, առողջ գաղափարական, արուեստագէտ ու գործարար պրն. Վահէ ճեպեճեանը, իսկ իր կողքին կանգնածը իր դուստրն է, որ նոյնպէս Զայաստան կը մեկնի՝ ուսանելու, ուրեմն բարեկամացէ ու ձեր ընկերութիւնը հոն ալ շարունակեցէ: Անունը Ալիծ է, ըսաւ ան:

Ալիծը շէկ, կապուտաշէտ ու դեղնորակ, գրաւիչ պարմանուի մըն էր եւ առաջին իսկ հայեացքով եւ, յետ խօսակցութեան, արդէն պարզուեցաւ, որ մտաւորական խառնուածքով ու հետաքրքրութեամբ համակուած մըն էր, իր բարձրագոյն ուսման համար ընտրելով գրականութեան ու բանասիրութեան ճիւղը, Երեւանի Պետական համալսարանին մէջ:

Ես ալ իմ նախասիրութիւններս պարզեցի, դիտել տալով, թէ պիտի մասնագիտանամ հայոց լեզուի ու գրականութեան բանասիրական ոլորտին մէջ, ապա յիշեցնելով, որ եթէ ինք յաճախած եւ աւարտած է Զայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանը (Էշրեֆի), ես ալ յաճախած եմ եւ աւարտած Զայ Աւետարանական Քոլէճը (քաղաքի), այնպէս որ թէ՛ անցեալի, թէ՛ ներկայի, թէ՛ ապագայի գծով համարեալ նոյն ընտրանքներուն կը միտինք, այն յոյսով եւ ակնկալութեամբ, որ «հայ աշխարհ»-ն է մեր նպատակակէտը, իր ազգային-կրթական, մշակութային-բանասիրական ուղղութիւններով, ծառայութիւններով ու հեռանկարներով:

Մեր այս ծանօթութիւնը, բնական է, հետագային եւս ունեցաւ իր շարունակութիւնը, տրուած ըլլալով որ նոյն հանրակացարանի բնակիչներ էրին ու նոյն համալսարանի ուսանողներ, թէեւ, աւելի ուշ, Ալիծը այլուր փոխադրուեցաւ, նաեւ հայրենի արուեստագետներու եւ արուեստասէրներու շրջանակի մը մէջ յայտնուեցաւ, սակայն մեր հանդիպումները, անակնկալ թէ սփիւռքահայ ուսանողներու ծիրէն ներս, միշտ սիրալիկ եւ անկեղծ մնացին:

Մեր շրջանաւարտութենէն ետք, Լիբանանի մէջ առիթներ կը ստեղծուէին գիրար տեսնելու ու գրուելու, յատկապէս երբ պատեհութիւններ ստեղծուեցան երեք ու վաստակաւոր մտաւորականներու, գրողներու ու խմբագիրներու հետ ունենայինք գրական հանդիպումներու, հարցազրոյցներու, որոնք մեզի համար, խումբ մը բանասէրներու, իսկապէս շահեկան էին, օգտաշատ եւ ուսանելի:

Զարաբաստիկ լիբանանեան քաղաքացիական կռիւները, ինչպէս ամէն ինչ, տակնուվրայ ըրին նաեւ մտերմութիւններն ու բարեկամութիւնները, ընկերակիցներն ու համախոհները, մերթ գաղթով, մերթ ընդհատումներով, մերթ ալ անակնկալ մահերով:

Եղաւ շրջան մը, երբ Ալիծին «հետք»ը կորստուեցաւ, մինչեւ որ իր մերձակորներէն եւ երբեմնի ծանօթներէն իմացայ, որ փոխադրուած ու կայք հաստատած է Ամերիկայի մէջ (Լոս Անճելէս), ընտանիք կազմած ու հետզհետէ կը նախապատ-

Շարունակութիւնը տեսնել էջ 3

ԻՆՉՊԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԻՐՈՒԿՈՒԷՅԻ ՄԷՉ, ՌԻՐՈՒԿՈՒԷՅԸ ԱՅԺՄ ՌԻՆԻ ԻՐ ԴԵՄՊԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ

ՏԻԷԿՕ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ («Ռատիօ ԱՐԱՔՍ»-ի տնօրէն)

Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ Զայաստանի Զանրապետութեան մէջ Ուրուկուէյի Զանրապետութեան նորանշանակ դեսպանը՝ տիկին Սիլվանա Լեսկա Պարոլին, պաշտօնապէս հաւատարմագրուեցաւ եւ սկսաւ իր դիւանագիտական առաքելութիւնը Երեւանի մէջ:



Զաւատարմագրութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Զայաստանի Զանրապետութեան նախագահի նստավայրին մէջ, ուր դեսպան Լեսկան իր նամակները յանձնեց նախագահ Վահագն Խաչատուրեանին:

Զանդիպման ընթացքին, նախագահ Խաչատուրեան ընդգծեց, որ Զայաստանը եւ Ուրուկուէյը մշտապէս պահպանած են բարեկամական յարաբերութիւններ՝ իմնուած փոխադարձ յարգանքի եւ փոխըմբռնման վրայ: Ան շեշտեց նաեւ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու խորացման եւ բազմաճիւղ համագործակցութեան ընդլայնման մեծ ներուժը:

Իր կարգին, դեսպան Լեսկան յայտնեց իր ուրախութիւնը Զայաստանի մէջ տոյն առաքելութիւնը ստանձնելու համար, եւ իր խանդավառութիւնը՝ գործնական մասնակցութիւն բերելու երկու ժողովուրդներու միջեւ կապերու սերտացման եւ ընդլայնման:

Զանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ տնտեսական յարաբերութիւններու խթանման անհրաժեշտութեան, ինչպէս նաեւ նոր ձեւաչափերու մշակման համագործակցութեան կարեւորութեան: Յատուկ ընդգծուեցաւ նաեւ տեղեկատուական եւ ստեղծագործական արհեստագիտութիւններու զարգացման կարեւորութիւնը:

Քննարկուեցաւ Ուրուկուէյի մէջ «Թունօ» ստեղծարար արհեստագիտական կեդրոն մը հիմնելու հնարաւորութիւնը, ինչպէս նաեւ Զայաստանի մէջ Ուրուկուէյի «Plan Ceibal» ծրագրի մասնաճիւղի մը հիմնումը:

Զանդիպման օրակարգերուն մաս կազմեց նաեւ 2026 թուականին Երեւանի մէջ նախատեսուած ՄԱԿ-ի կենսաբազմազանութեան գագաթաժողովին (COP-15) առնչուող շարք մը հարցերու քննարկումը: Երկու կողմերն ալ համաձայնեցան, թէ պէտք է ձեւաւորել համատեղ դիրքորոշումներ եւ ամրապնդել փոխյարաբերական գործակցութիւնը:

Սոյն դիւանագիտական նշանակումը նոր եւ նշանակալի քայլ մըն է՝ նոր հորիզոններ բանալով Ուրուկուէյի եւ Զայաստանի միջեւ մշակութային, արհեստագիտական եւ դիւանագիտական փոխանակումներու յարաբերութիւններուն մէջ: Ան կը ներկայացնէ իսկական ծեռքերուն մը երկու բարեկամ ժողովուրդներուն համար:

Փիլիսոփայական մտորումներ-25

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՍՈՒՐԵՆ ՇԵՐԻՔ

Պէտք չէ շփոթել **ճշմարիտ** ու **իրական** (le vrai et le réel): Տարբեր բառարաններու մէջ տրուած սահմանումներն կը հետեւի, թէ ճշմարտութիւնը (la vérité) երեւոյթի մը կամ գաղափարի մը **իրականութեան համապատասխանելու** հասկացութիւնն է: Այլ խօսքով՝ բան մը, երեւոյթ մը, խօսք մը, գաղափար մը այնքան ճշմարիտ է, որքան որ այն բանը, երեւոյթը, խօսքը կամ գաղափարը կը համախառնապէս իրականին կամ իրողութեան:

Ճշմարտութեան եզր-գաղափարը ընդարձակ տարրողութիւն ունեցող հասկացութիւն է, որովհետեւ **ամէն անձ իր ուրոյն ճշմարտութիւնը ունի** մասնաւորաբար ոչ-շօշափելի ոլորտներու ուղղութեամբ, ինչպիսին են արուեստը, փիլիսոփայութիւնը, ընկերային հարցերը, հոգեբանութիւնը եւ մնացածը: **Վերացական երեւոյթներ:** Ուրեմն երկու գլխաւոր պարագայ խնդրոյ առարկայ է: Մեր **զգայարաններով ընկալուած ճշմարտութիւններ** եւ մեր **զգայարաններէն դուրս մնացած մտադրացում կամ զգացումներով ընկալուած երեւոյթներ:** Երբ գոյնի մը մասին կը խօսինք ու կ'ըսենք այս առարկան կարմիր է կամ կանաչ, գիտենք որ ճշմարտութիւնը լիարժէք կերպով կը համապատասխանէ իրողութեան, քանի որ նոյն առարկան ուրիշ անձի մը կողմէ նոյն գոյնով կ'անուանուի կամ կ'ընկալուի, եթէ ի հարկէ դիտարկող երկու անձերէն մէկը տեսնողութեան խանգարում չունի:

Այսուհանդերձ երբ պարագան աղերս ունի մեր մտային արժեւորում կամ գնահատականներու, ինչպէս նաեւ մեր զգացական ընկալումներուն հետ, արտայայտութիւններն ու արժեւորումները, գաղափարներն ու հաստատումները կը փոխուին մէկ անձէն միւսը, երբեմն հասնելով նոյնիսկ **հակասական մօտեցումներու:** Ո՛ր է **ճշմարտութիւնը** այս

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ...

Շարունակուած էջ 3-էն

մաղթանքներ. «Ձեր մէջ ամրապնդեցէ լոջութիւնը՝ կեանքի հանդէպ ունեցած ծեր մօտեցումին մէջ, յարատեւութիւնը՝ որպէսզի ամուր պահէք դժուարութիւններու դիմաց չընկճուելու եւ չընկրկելու կամքը, եւ աշխատասիրութիւնը, որ է յաջողութեան միակ ճամբան»: Ապա ան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, վարժարանի անձնակազմի անդամներուն եւ օժանդակ մարմիններուն, շեշտելով որ իւրաքանչիւրին ջանքն ու յանձնառութիւնը հանդիսացան այն ամուր կռուանը, որուն վրայ կը կերտուին աշակերտներուն յաջողութիւնը եւ վարժարանին համբաւը:



Շրջանաւարտներուն անունով խօսքեր արտասանեցին Յակոբ Չափատարեան, Սարիա Քոչոյեան, Ալեքս Գալայճեան եւ Լէա Քէշիշեան, որոնք երախտագիտութեան իրենց զգացումները արտայայտեցին Մեսրոպեանի տնօրէնութեան, ուսուցիչներուն եւ ծնողներուն՝ մանկապարտէզէն մինչեւ ակադեմիական դասարան յանուն իրենց կրթութեան ի գործ դրուած գոհողութիւններուն եւ ջանքերուն համար:

Գեղարուեստական մասով, շրջանաւարտները կատարեցին նուագներ, երգեցին հայերէն եւ օտարալեզու երգեր, կատարեցին հայկական եւ յունական պարեր, եւ հուսկ, Մեսրոպեանի Վահանը փոխանցեցին իրենց յաջորդող աշակերտներուն:

Գերպո. Յ. Մաշտոց Թ.Ծ.Վ. Զահեթեան իր հայրական պատգամին մէջ յուզումով յիշեց Մեսրոպեանի մէջ իր ակադեմիական հանդէսին օրը՝ 20 տարի առաջ, դիտել տալով, որ մեսրոպեանական մը ըլլալը իրեն համար միշտ եղած է պատիւ եւ պարտաւորութիւն՝ ուր ալ գտնուած ըլլայ եւ իր ստանձնած բոլոր պատասխանատուութիւններուն մէջ:

Գերապայծառ հայրը մեծապէս գնահատեց վարժարանի տնօրէնութեան եւ անձնակազմին գործունէութիւնը, որուն շնորհիւ նորանոր սերունդներ աշխարհ մուտք կը գործեն մարդկային, ազգային եւ քրիստոնէական ամուր նկարագիրով եւ արժէքներով:


Հայր Մաշտոց յատուկ գնահատանքի խօսք ուղղեց ծնողներուն, շեշտելով որ հայ դպրոցը կանգուն կը մնայ հայ ծնողներու գոհողութեան, ազգային գիտակցութեան եւ հոգատարութեան շնորհիւ: Ան դիտել տուաւ, որ այս արժանիքները անգին են, յատկապէս նկատի առած այն աշխարհացունց փոփոխութիւնները որ տեղի կ'ունենան ինչպէս բոլոր մարզերուն, նաեւ՝ կրթութեան ոլորտին մէջ, որ օր-օրի կը փոխուի՝ արհեստագիտութեան արագընթաց յառաջդիմութեան հետ:

Գերապայծառ Զահեթեան մաղթեց աշակերտներուն, որ անվախօրէն յառաջ ընթանան դէպի գիտութեան եւ ուսման խորքերը, ընդլայնեն իրենց մտահորիզոնը եւ յենած իրենց արժանտներուն՝ բարձր պահեն Մեսրոպեանի անունը, ի փառս Սուրբ Մեսրոպ Մաշտոցին, իր գործակից հայրերուն, Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

Հանդէսը ավարտեցաւ վկայականներու բաշխումով, որուն յաջորդեցին կարկանդակի հատումը եւ շնորհաւորութիւններու ընդունումը՝ ուրախութեան հրավառութեան ներքոյ:

Տեղեկատուական Գրասենեակ
Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանի

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



Պէյրութ (արեւոտ)
Ցերեկը 26/22՝ գիշերը՝ 61% տամուկ

Երեւան (արեւոտ)
Ցերեկը 28/14՝ գիշերը՝ 27% տամուկ

Հալէպ (արեւոտ)
Ցերեկը 33/23՝ գիշերը՝ 19% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 31/18՝ գիշերը՝ 19% տամուկ

Տուսայ (արեւոտ)
Ցերեկը 38/28՝ գիշերը՝ 36% տամուկ

Լոս Անճելէս (Ընդի. ամպոտ)
Ցերեկը 29/19՝ գիշերը՝ 45% տամուկ

Սիւոնի – վաղը (արեւոտ)
Ցերեկը 18/12՝ գիշերը՝ 75% տամուկ

Մոնթեվիտո – վաղը (արեւոտ)
Ցերեկը 14/7՝ գիշերը՝ 69% տամուկ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 2-էն

կարգի հակասական գնահատականներու կամ դատողութիւններու միջեւ: Հոս ենթակային մտային, զգացական ունակութիւնները, կրթութեան մակարդակը, նախասիրութիւնները, խառնուածքը եւ այլ ազդակներ դեր կը խաղան:

Գոյութիւն ունին նաեւ **կրօնական ճշմարտութիւններ**: Մեր բոլորիս ծանօթ են Յիսուսի առակներն ու անոնց ընդմէջէն արտայայտուած պատգամները, որոնք յաճախ կը տարազուին «Ամէն, ամէն ասեմ ձեզ», այսինքն «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի» եւ կը շարունակուին այլազան կեանքի դրուագներու խորհրդանշական պատմութիւններով: Հոս Յիսուսին արտայայտած ճշմարտութիւնները, որոնք իր անձին առաջադրած ճշմարտութիւնները կը ցոլացնեն, ընդունուած են որպէս բացարձակ ճշմարտութիւններ, ընդունուած՝ **համայն քրիստոնէայ հաւատացեալ ժողովուրդներու կողմէ, առանց վիճարկումի, առանց վիճաբանութեան**: Ուրեմն կարգ մը ճշմարտութիւններու ընդունելի ըլլալը կամ ոչ կապ ունի **հաւատքի** հետ: Նոյնպէս երախայի մը համար իր ծնողներուն ըսածները գրեթէ բացարձակ ճշմարտութեան բնոյթ կը կրեն, երբ երախան յաճախ կուրծն կը հաւատայ իր խօրը եւ մօրը: Իսկ ի՞նչ կը վերաբերի **ճշմարտութեան արդարութեան հետ ունեցած յարաբերութեան**, փիլիսոփայական այս մասնայատուկ ոլորտը բաական հետաքրքրական է: «Ամէն ճշմարտութիւն արդա՞ր է»... Եկէք այս բաւական բարդ հարցը թողունք մասնագէտ իմաստասէրներուն:

ՍԱՐԿԱԿԻԱԳ-ԱԿԱՆ ՁԵՌՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Օրինութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կիրակի, 1 Յունիս 2025-ին, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին, սարկաւագական կարգ պիտի ստանան երկու դպրեվանքեցիներ:

Ձեռնադրիչ՝
ԳԵՐՇ. Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔ. ՕԶԱՆԵԱՆ

Սուրբ Պատարագ՝	առաւօտեան ժամը 9:30
Ձեռնադրութիւն	առաւօտեան ժամը 10:00
Քարոզ՝	առաւօտեան ժամը 11:00

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու յիշեալ հոգեպարար արարողութեան եւ աղօթակից դառնալու մեր Դպրեվանքի ընծայեալներուն, որպէսզի իրենց Աստուածահաճոյ առաքելութեան մէջ հաստատ մնան եւ ամուր քայլերով ընթանան «դէպի աղբիւր Լոյսին»:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

Հայ աւետարանական զօլէճը (Հայկազեան համալսարանին կից) աշխատանքի կը հրաւիրէ աշակերտ հաւաքագրողներ (recruiters), որոնք

- Ունին համոզիչ լեզու
- Դիրահաղորդ եւ ընկերային են
- Կը տիրապետեն կազմակերպչական հմտութիւններու

Հետաքրքրուողներ կրնան իրենց CV-ն ղրկել principal@aecbeirut.edu.lb հասցէին: Նպատակայարմար նկատուած թեկնածուներուն ժամադրութիւն պիտի տրուի տնօրէնութեան հետ տեսակցութեան համար:

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Խոր յուզումով լսեցինք մեր նախկին պաշտօնակիցներէն տիար Զաւէն Տիգրանեանի քրոջ ընկերուի **ԶԱՐԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ** անժամանակ մահուան բօքը: «Արարատ» իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, ի մասնաւորի ողբացեալի եղբօր՝ տէր եւ տիկին Զաւէն Տիգրանեանին, եւ քրոջ՝ ընկերուի Վիգի Տիգրանեանին:

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկերուի **ԶԱՐԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ** անժամանակ մահուան տխուր առիթով, Ս.Ղ.Յ.Կ.-ի «Մարօ Նազարէկեան» մասնաճիւղի վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին եղբօր, քրոջ եւ հարազատներուն:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradortat@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية
تصدر عن شركة ماسيس للثقافة والشر (ش.م.م.)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

31 Մայիս 2025: Տարուան 151-րդ օրն է:
2025-ի ակադեմիական տարւոյ 214 օր:

Դէպքեր-տօներ

1859 – Լոնտոնի նշանաւոր «Պիկ Պեն» աշտարակին ժամացոյցը սկսաւ իր պաշտօնական գործարկումը:

1961 – Հարաւափրիկեան Հանրապետութիւնը անկախացաւ Մեծ Բրիտանիայէն:

1976 – Սուրիական բանակը մուտք գործեց Լիբանան՝ քաղաքացիական պատերազմը ակադեմիական հասցնելու նպատակով, սակայն այս քայլը բախեցաւ պաղեստինեան եւ ծախակողմեան ուժերու դիմադրութեան:

1997 – Ռուսիոյ նախագահ Պորիս Ելցին Ուքրանիա կատարեց պաշտօնական այցելութիւն մը եւ Լեոնիտ Կուչմայի հետ ստորագրեց բարեկամութեան եւ համագործակցութեան տասը տարուան պայմանագիր:
- Ծխախոտի Դեմ Պայքարի Համաշխարհային Օր:

Ծնունդներ

1883 – **Դրաստամատ Կանայեան (Դրօ)**, քաղաքական ու զինուորական գործիչ, հրամանատար ու ազգային-ազատագրական շարժման առաջնորդ: Մասնակցած է Սարդարապատի ճակատամարտին եւ եղած է ՀՀԳԻ-ի գործիչներէն: Հայաստանի Առաջին Հանրապետութեան ռազմութեան նախարար եղած է 1918-ին:

1903 – **Էգրաս Հասարթեան**, նշանաւոր գիտնական, որ կարելոր ներդրում ունեցաւ բժշկական գիտութեան ասպարէզին մէջ: Մեծ վաստակ ձգած է նաեւ հայ բժշկական կրթութեան զարգացման մէջ:

1910 – **Նորա Ատանեան**, ռուսախօս հայ արձակագիր եւ թարգմանչուի: Իր գրութեամբ անդրադարձած է մարդկային ճակատագրերու, կնոջ դերին եւ հասարակական հարցերու:

1930 – **Քլիմ Իսթուոտ**, ամերիկացի դերասան, բեմադրիչ եւ երաժշտութեան սիրահար ստեղծագործող: Յատկապէս նշանաւոր է ամերիկեան «ուեսթըրն» ժանրի մէջ իր կերպարներով:

1946 – **Լուսիկ Ազուլեցի**, հայ նկարչուի, ազգագրագէտ եւ մշակութային ժառանգութեան ջերմ պաշտպան: Արժանացած է ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչի կոչման: Հիմնադրած է «Լուսիկ Ազուլեցի» բանգարանը՝ դարձնելով զայն հայ ակադեմիական կեանքի օրօրոց մը:

1954 – **Միքայէլ Պողոսեան**, բազմակողմանի տաղանդաւոր դերասան, թատերագիր եւ բեմադրիչ: Գործած է նաեւ իբրեւ երգիչ եւ արտադրող, մասնակցելով ազգային մշակոյթի զարգացումին:

1892 – **Համօ Բեկնազարեան (Համբարձում Իւանի Բեկնազարով)**, հայ ֆիլմաշխարհի ռահիկրայ, առաջին հայ շարժապատկերի հեղինակներէն: Նկարահանած է «Նամուս» եւ «Զարեհ ու Աւան» ֆիլմերը՝ հիմք դնելով հայկական ֆիլմին:

1984 – **Դաւիթ Գարեգինի Յարութիւնեան**, վրացահայ շախմատիստ եւ կրօնայաթըր ճանչցուած 2006 թուականին ի վեր: 2014-էն սկսեալ՝ ՏիՏԷ-ի պաշտօնապէս ճանչցուած մարզիչ:

1888 – **Յովհաննէ Սարեան**, հայ պատմաբան ու բանասէր: Աշխատած է արեւմտահայերէնով եւ մեծ ներդրում ունեցած է հայ մշակոյթի պատմութեան մէջ:

1162 – **Զինկա Խան**, մոնկոլական կայսրութեան հիմնադիր, նշանաւոր ռազմավար եւ պետութեան գերպետական խորհրդանիշ: Իր կողմէ հիմնուած կայսրութիւնը դարձած է միջնադարեան աշխարհի ամենամեծ երկիրը:

1908 – **Իւան Ֆլեմինկ**, բրիտանացի գրող եւ լրագրող, որ աշխարհահռչակ դարձաւ իր ստեղծած «Ելմս Պոնտ» գաղտնի գործակալին վրայ հիմնուած վեպերով: Ծառայած է բրիտանական ծովային հետախուզութեան մէջ՝ Եկրորդ Համաշխարհային ընթացքին: Իր գործերը վերածուցան աշխարհասփիւռ յայտնի ֆիլմաշարքի:

1819 – **Ուոլթ Ուիլիամս**, ամերիկացի նշանաւոր բանաստեղծ, արձակագիր եւ լրագրող, որ նորոյթ բերաւ ամերիկեան գրականութեան:

1934 – **Շերիլ Մաքլէյն**, ամերիկացի դերասանուի, պարուի եւ հեղինակ, որ արժանացած է Օսքար, Կոտըն Կլօպ եւ այլ մրցանակներու:

Մահեր

1832 – **Էվարիստ Կալուս**, ֆրանսացի մաթեմատիկոս, որ համճարեղ էր իր կեանքի կարճ տեւողութեան մէջ: Գտաւ խումբերու տեսութեան հիմքերը՝ նախքան 21 տարեկան դառնալը:

2001 – **Առլեն Ֆրեմսիս**, ամերիկահայ դերասանուի եւ հեռուստահաղորդավարուի:

1983 – **Սեւառա Ալեքսանտրի Բակունց**, հայ նշանաւոր բժիշկ-ֆիզիոլոգ եւ գիտական կեանքի կազմակերպիչ: Ակտել Բակունցի որդին է:

1936 – **Փայլակ Միքայէլեան**, ֆրանսահայ գրող:
1809 – **Եռզէֆ Հայտըն**, աստրիացի նշանաւոր բանաստեղծ եւ երաժշտագէտ, որ դասական երաժշտութեան հիմնադիրներէն մէկն է:

1959 – **Ճոն Ֆոսթըր Տալեա**, ԱՄՆ արտաքին գործերու նախարար՝ նախագահ Այզենհաւորի վարչակազմին մէջ: Կարելոր դեր ունեցած է ՆԱՅՕ-ի եւ այլ ռազմավարական դաշինքներու ձեւաւորման մէջ:

ՈՒՂՂՈՒՄ

Մեր Հինգշաբթի օրուան՝ 29 Մայիս 2025-ի թիւի 2-րդ էջին վրայ, յօդուածագիր Պերճ Արապեանի յօդուածի խորագրին մէջ կայ վրիպակ մը, որուն համար մեր ընթերցողներուն ներողամտութիւնը կը հայցենք, ինչպէս նաեւ շնորհակալութիւն կը յայտնենք այս մասին յուշող «Արարատ»-ի աշակուղջ ընթերցողներուն:

Խորագիրը պէտք է ըլլայ՝ «ԱՐԹՆՑԱԻ ԱՌԻԹԸ, ԴՊՂԱՑ ՈՒ ԴՊՂԱՑ ԱՇԽԱՐՀԸ»: